

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի մարզպետ Կ.Շահգալոյանը

ք.Հրազդան

30.05.2013թ.

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

-Մարզի խորհրդի անդամ 67 համայնքների ղեկավարներից 56-ը /բացակայում էին Եղվարդ, Նոր Հաճրն, Մարմարիկ, Ջրառատ, Արզնի, Բալախովիտ, Գողթ, Գետամեջ, Թեղենիք, Նոր Երզնկա, Քասախ համայնքների ղեկավարները/

-Վ.Բակլայան, Կ.Մարգարյան, Ա.Ղազարյան - ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալներ

-Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ

-Ա.Պետրոսյան, Ա.Ուլիխանյան, Վ.Վիրաբյան, Ա.Գևորգյան - ՀՀ Կոտայքի մարզի տարածքային գինվորական կոմիսարներ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1.2013թ. գարնանային զորակոչի կազմակերպման և անցկացման, 1997թ. ծնված պատանիներին զորակոչային տեղամասերում կցագրման, ՀՀ ՊՆ և օտարերկրյա պետությունների ռազմական ուսումնական հաստատությունների դիմորդ-թեկնածուների ընտրման աշխատանքների մասին:

(զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ս.Հակոբյան)

2.Վարչական հսկողության արդյունքների մասին:

(զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ս.Հակոբյան)

3.Մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման ընթացքը 2013 թվականի հինգ ամիսների դրությամբ:

(զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ. Նահապետյան)

4.Մարզի 2013թ. առաջին եռամսյակի սոցիալ-տնտեսական վիճակի վերլուծություն:

(զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման և ծրագրերի վերլուծության բաժնի պետ՝ Ն.Մարգարյան)

5.Մարզում շահագործվող հանքավայրերի գործունեության օրինականության նկատմամբ հսկողության, ինչպես նաև հանքարդյունահանողների հողհատկացման փաստաթղթերի առկայության, պայմանագրային պարտավորությունների կատարման մասին:

(զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Մ. Եղիազարյան)

Հայտարարություն

<<Արի տուն>> ծրագրի և <<Բազե>> մարզային երիտասարդական հավաքի կազմակերպական աշխատանքների մասին:

(Կոտայքի մարզպետի տեղակալ՝ Կ. Մարգարյան)

Ջինապարտների գրանցամատյանների վարման աշխատանքների իրավիճակի մասին:

2013թ. ապրիլ-մայիս ամիսներին անցկացված զորահավաքություններին զինապարտների մասնակցության և կազմակերպման մասին:

(ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ՝ Ս.Հակոբյան)

ԼՍԵՑԻՆ՝

1. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ս.Հակոբյանի զեկուցումները 2013թ. գարնանային զորակոչի կազմակերպման և անցկացման, 1997թ. ծնված պատանիներին զորակոչային տեղամասերում կցագրման, ՀՀ ՊՆ և օտարերկրյա պետությունների ռազմական ուսումնական հաստատությունների դիմորդ-թեկնածուների ընտրման աշխատանքների և վարչական հսկողության արդյունքների մասին:

/Զեկուցումները կցվում են/:

2. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լ. Նահապետյանի զեկուցումը մարզի համայնքներում 2013 թվականի հինգ ամիսների դրությամբ սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի մասին:

/Զեկուցումը կցվում է/:

3. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման և ծրագրերի վերլուծության բաժնի պետ Ն.Մարգարյանի զեկուցումը մարզի 2013թ. առաջին եռամսյակի սոցիալ-տնտեսական վիճակի վերլուծության մասին:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

4. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ. Եղիազարյանի զեկուցումը մարզում շահագործվող հանքավայրերի գործունեության օրինականության նկատմամբ հսկողության, ինչպես նաև հանքարդյունահանողների հողհատկացման փաստաթղթերի առկայության, պայմանագրային պարտավորությունների կատարման մասին:

/Զեկուցումը կցվում է/:

Հանձնարարվեց՝

Տարածքային զինվորական կոմիսարներին՝

- 1.Տարվա կտրվածքով ապահովել 1997թ. ծնված պատանիներին զորակոչային տեղամասերում կցագրման և 2013թ. գարնանային զինակոչի առաջադրանքները:
- 2.Ընդունել ի գիտություն տարածքային զինվորական կոմիսարների հայտարարությունն աշնանային զորակոչի ցուցանիշները պարտադիր ապահովելու վերաբերյալ:
- 3.Գործնական միջոցներ ձեռնարկելու համար յուրաքանչյուր զորակոչից հետո մարզպետարան ներկայացնել տեղեկատվություն կատարված աշխատանքների մասին:


ՀՀ Կուրայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ս.Հակոբյանին՝

- 1.Ներկայացնել առաջարկություն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի խախտումներ թույլ տված համայնքների ղեկավարներին պատասխանատվության ենթարկելու համար:
- 2.Մարզի համայնքներում իրականացված վարչական հսկողության արդյունքները պարտադիր դարձնել քննարկման առարկա տեղերում աշխատակազմի, ավագանու և հասարակության մասնակցությամբ:

Առաջարկվեց՝

Համայնքների ղեկավարներին՝

- Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ զինապարտների գրանցամատյաններում առկա թերությունները վերացնելու ուղղությամբ:
- Ապահովել 2013թ. առաջին կիսամյակի և տարվա կտրվածքով համայնքների բյուջեների կատարողականը բոլոր հարկատեսակների գծով:
- Ապահովել <<Արի տուն>> ծրագրին և <<Բազե>> մարզային երիտասարդական հավաքին համայնքների ակտիվ մասնակցությունը:

 Կ.ՇԱՀԳԱԼԳՅԱՆ